Universal Communications

Ինչպես կառավարել պորտալը
Հաղորդումների էլեկտրոնային ցանկ
Տեսավարձույթ
Ձայնագրում
Հատուկ հնարավորություններ

U!TV
օգտագործողի ձեռնարկ

Ինչպես կառավարել պորտալը
Հաղորդումների էլեկտրոնային ցանկ
Տեսավարձույթ
Ձայնագրում
Հատուկ հնարավորություններ

U!TV
օգտագործողի ձեռնարկ

Բովանդակություն

1. Ներածություն 4
2. Ի՞նչ է U!TV-ն 4
3. Ինչպես կառավարել պորտալը 5
   Հեռակառավարման վահանակ 5
   Մենյուն և մենյուի կառուցվածքը 6
4. Ինչպես կարգաբերել U!TV պորտալը 7
   Կարգավորումներ 7
   Բաժանորդի կարգավորումներ (իմ կարգավորումներ) 9
   Կառավարել օգտվողներին 14
   Գրանցել օգտվող 17
   Ջնջել օգտվող 17
5. Փնտրել 18
6. Հաղորդումների էլեկտրոնային ցանկ (EPG) 19
   Ի՞նչ է EPG-ն 19
   Հաղորդումների ցանկի պատկերման տարբերակները 19
   EPG մենյու 21
7. Վիդեո 22
   Տեսավարձույթ 22
8. Իմ նյութերը 27
   Ձայնագրություններ 27
   Հիշեցումներ 28
   Վճարումներ 29
9. Ելք 29
10. Հատուկ հնարավորություններ 30
   Մինի EPG 30
   Տեսացանկի նկար 32
   Ձայնագրում 32
   Catch up/ավարտված հաղորդումների դիտում/ 33
   Վերսկսել հաղորդումը 33
   Ալիքների դասավորում 33

1” Ներածություն

Հարգելի U!TV բաժանորդ,

Ձեզ ենք ներկայացնում U!TV ծառայության օգտագործողի հետևյալ ձեռնարկը, որը կոչված է մեր պորտալից օգտվելը դարձնել ավելի պարզ ու հաճելի: Հուսով ենք այս ուղեցույցը կնպաստի Ձեր ժամանցը մեր պորտալում դարձնել ավելի հետաքրքիր՝ թույլ տալով առավել լիարժեք օգտվել U!TV ծառայության բացառիկ առավելություններից:

2” Ի՞նչ է U!TV-ն

Ինչն է դարձնում U!TV-ն այսքան յուրահատուկ և ինչով է այն գերում բոլորին: Մենք տալիս ենք մեր բաժանորդին հեռարձակվող եթերը ամբողջովին կառավարելու հնարավորություն: Եթերը դադարեցնել, վերադառնալ նախորդ հաղորդմանը, ընտրել անցած հաղորդումը էլ. ցանկից, վերսկսել հաղորդումը. սրանք U!TV ծառայության հեղափոխական հնարավորություններից ընդամենը մի քանիսն են:

Գիտակցելով յուրաքանչյուր բաժանորդի հատուկ նախասիրությունները՝ մենք ընդգրկել ենք տարբեր ժանրերի ալիքներ և հնարավորություն ձևավորելու ձեր սեփական փաթեթը՝ առավել մատչելի գնով: Իսկ եթե չեք կարողանում գտնել նախընտրած հաղորդումը, ֆիլմը, երաժշտությունը կամ համերգը եթերում, մեկ հպումով ընտրեք Full HD որակի նորագույն ֆիլմեր, մուլտֆիլմեր և համերգներ մեր տեսադարանից և վայելեք բարձր որակի թվային եթերը:

3” Ինչպես կառավարել պորտալը

Հեռակառավարման վահանակ



1. Անջատել/միացնել սարքը
2. Մենյու
3. Հավելյալ տեղեկություն
4. Ալիքի թերթում՝ հաջորդ, նախորդ, մենյուում՝ անցնել վերև, ներքև
5. Հաղորդումների ցանկի թերթում՝ հաջորդ, նախորդ; մենյուում՝ անցնել աջ, ձախ
6. Հաստատել/ընտրել (OK); տեղեկություն դիտվող հաղորդման/ֆիլմի մասին
7. Դիտում՝ Play, դադար՝ Pause
8. Ավարտ՝ Stop
9. Առաջ/ետ տալ հաղորդումը
10. Դուրս գալ
11. Անցում հաղորդումների ցանկին
12. Հավելյալ կոճակներ
13. Հաղորդումների ցանկի թերթում mini EPG-ում
14. Հեռուստաալիքներ
15. Տելետեքստ
16. Ձայնագրում
17. Ձայնի կառավարում
18. Անջատել ձայնը

Մենյուն և մենյուի կառուցվածքը

Ծանոթացում մենյուի հետ

Մենյուն հնարավորություն է տալիս փոփոխել և կառավարել Ձեր U!TV պորտալը:

Անցնել մենյու

Մենյու մուտք գործելու համար սեղմեք MENU կոճակը հեռակառավարման վահանակի վրա: Ձեր հեռուստաէկրանին կհայտնվի մենյուն: Մենյուն բաղկացած է մի շարք բաժիններից, որոնք դուք կարող եք տեսնել անցնելով աջ/ձախ՝ սեղմելով համապատասխան կոճակները վահանակի վրա ◀ ▶:

Մենյուի կառուցվածքը



Հաղորդումների ցանկը իրենից ներկայացնում է հեռարձակվող հեռուստահաղորդումների հաջորդական բովանդակություն:

Վիդեո բաժինը իրենից ներկայացնում է ֆիլմերի տեսավարձույթ, որտեղ դուք կարող եք դիտել բազմաժանր ֆիլմեր:

Իմ նյութերը բաժնում զետեղված է տեղեկատվություն բաժանորդի վարձակալած ֆիլմերի, ձայնագրությունների, վճարումների պատմության վերաբերյալ:

Ելք-ի միջոցով բաժանորդը կարող է դուրս գալ համակարգից:

Կարգավորումներ բաժինը թույլ է տալիս կարգաբերել մենյուի լեզուն, էկրանի համամասնությունը, օգտագործողների հաշիվները, սահմանել ծնողական վերահսկողություն:

Փնտրել բաժինը թույլ է տալիս օգտվողին հեշտությամբ գտնել ցանկացած հաղորդում կամ ֆիլմ TV պորտալում:

Ucom Xtras բաժնում ներկայացված են հավելյալ հնարավորություններ, եղանակի տեսություն, տարադրամի փոխարժեք և այլն:

4" Ինչպես կարգաբերել U!TV պորտալը

Կարգավորումներ

Ծանոթացում համակարգի կարգավորումներին

Կարգավորումները հնարավորություն են տալիս օգտվողին կարգաբերել հեռուստաէկրանի և TV պորտալի համամասնությունը, տեսնել տեղեկատվություն բաժանորդային սարքի և ծրագրային ապահովման մասին:



Ինչպես անցնել համակարգի կարգավորումներ

Համակարգի կարգավորումներ անցնելու համար սեղմեք MENU, անցեք Կարգավորումներ բաժին և սեղմեք OK. Կբացվի Կարգավորումներ էջը: Սեղմեք OK համակարգի կարգավորումները տեսնելու համար:

Այստեղ դուք կտեսնեք.

- Սարքի անվանումը
- Նախանշված օգտվող
- էկրանի համամասնությունը - TV պորտալի համամասնությունը
- Վիդեոյի հարաբերակցությունը - Ձեր հեռուստացույցի/ էկրանի համամասնությունը
- Մոդել - Բաժանորդային սարքի մոդելը
- MAC հասցե - Բաժանորդային սարքի MAC հասցեն
- IP հասցե - միացման IP հասցեն
- Տարբերակ - TV պորտալի ծրագրային ապահովման տարբերակը
- Իրավական տեղեկատվություն

Այստեղ հնարավոր է կարգաբերել կամ փոփոխել սարքի անվանումը, էկրանի համամասնությունը և վիդեոյի հարաբերակցությունը:



էկրանի համամասնություն

TV պորտալի համամասնությունը փոխելու անհրաժեշտությունը կախված է Ձեր հեռուստացույցի էկրանի համամասնությունից:

Եթե Ձեր հեռուստացույցը լայնէկրան է, ապա պետք է TV պորտալի համամասնությունը դարձնել «16x9», իսկ եթե ոչ՝ «4x3».



Ձեր TV պորտալի էկրանի համամասնությունը փոխելու համար անցեք էկրանի համամասնություն տողին և սեղմեք OK.

Կհայտնվի փոքր պատուհան. այստեղ ընտրեք համամասնությունը «4x3», «16x9»՝ սեղմելով OK, կամ սեղմեք «Ելք» կարգավորումներ էջին վերադառնալու համար:

Վիդեոյի հարաբերակցությունը

Հեռարձակվող ալիքի պատկերի հարաբերակցությունը փոխելու համար անցեք «Վիդեոյի հարաբերակցությունը» տողին և սեղմեք OK: Կհայտնվի փոքր պատուհան. այստեղ ընտրեք արկղում, կտրված, անփոփոխ՝ սեղմելով OK, կամ սեղմեք «Ելք» կարգավորումներ էջին վերադառնալու համար:

Բաժանորդի կարգավորումներ (Իմ կարգավորումները)

Ծանոթացում բաժանորդի կարգավորումներին

Բաժանորդի կարգավորումներում հնարավոր է փոփոխել օգտվողի անձնական տվյալները, փոխել լեզուն, հաղորդումների ցանկի ցուցադրման եղանակը, ստեղծել/ փոփոխել ծածկագրերը և այլն:

Ինչպես անցնել «Իմ կարգավորումները»

«Իմ կարգավորումները» անցնելու համար սեղմեք MENU, անցեք Կարգավորումներ բաժին և սեղմեք OK. Կբացվի Կարգավորումներ էջը: Այստեղ անցեք «Իմ կարգավորումները» և սեղմեք OK:





Եթե Դուք մուտք եք գործել որպես Ադմինիստրատոր, Դուք կտեսնեք հետևյալ դաշտերը (տե՛ս նկարները):

Ադմինիստրատորը կարող է փոփոխել և կարգաբերել բոլոր դաշտերը.

- Կարգաբերել իր բոլոր տվյալները,
- Կառավարել այլ բաժանորդի կարգավորումները,
- Ավելացնել կամ ջնջել օգտվող:

Ինչպես կառավարել «Իմ կարգավորումները»՝ որպես ադմինիստրատոր

- **Հաղորդումների ցանկի տեսք -** հաղորդումների էլեկտրոնային ցանկի պատկերման ձևի ընտրություն

  Այստեղ կարելի է ընտրել հաղորդումների էլեկտրոնային ցանկի պատկերման ձևը: Փոփոխելու համար հաղորդումների ցանկի տեսքը՝ անցեք «Հաղորդումների ցանկի տեսքը» դաշտին և սեղմեք OK : Կհայտնվի փոքրիկ պատուհան: Ընտրեք ցանկ կամ ժամատախտակ և սեղմեք OK :



- **Գունավորում -** Ցույց է տալիս U!TV պորտալի օգտագործվող գունավորումը:
  Եթե դուք ցանկանում եք փոփոխել պորտալի գունավորումը, անցեք Գունավորում դաշտին և սեղմեք OK: Կբացվի փոքրիկ պատուհան: Այստեղ ընտրեք նախընտրելի գունավորումը և հաստատեք Ձեր ընտրությունը՝ սեղմելով OK, կամ սեղմեք «ելք» դուրս գալու համար:



- **Տեսացանկի նկարը -** Այստեղ կարելի է անջատել կամ միացնել «Տեսացանկի նկար» ֆունկցիան:



- **Ադմինիստրատոր -** Ցույց է տալիս՝ տվյալ բաժանորդը հանդիսանու՞մ է Ադմինիստրատոր, թե՞ ոչ:

- **Օգտվողի անվանում -** Ի սկզբանե այս դաշտում գրված է Ձեր բաժանորդային հայտի յոթանիշ համարը, որով դուք կարող եք կատարել վճարումներ, կառավարել Ձեր հաշիվը www.ucom.am կայքում: Յոթանիշ համարը դուք կարող եք փոփոխել ցանկացած անվանումով, որը և կհայտնվի U!TV պորտալ մուտք գործելիս: Օգտվողի անունը փոփոխելուց հետո Ձեր անձնական համարը կարող եք իմանալ Ձեր բաժանորդային հայտից:



- **Անուն -** Բաժանորդի անուն

- **Ազգանուն -** Բաժանորդի ազգանուն

  Այս դաշտերում տվյալների փոփոխումը չի անդրադառնում Պայմանագրում առկա տվյալների վրա:
  Օգտվողի անվանումը, անունը կամ ազգանունը փոփոխելու համար անցեք համապատասխան դաշտ, սեղմեք OK. Կբացվի փոքրիկ պատուհան: Մուտքագրեք Ձեր ցանկացած անվանումը՝ օգտագործելով Ձեր թվատախտակը(14) հեռակառավարման վահանակի վրա:

Հեռակառավարման վահանակի թվատախտակին թվերի բազմակի սեղմումով դուք կարող եք ընտրել Ձեր ցանկացած տառը երեք այբուբեններից՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Քանի որ U!TV պորտալը հասանելի է երեք լեզվով, ապա տառերը յուրաքանչյուր տարբերակում դասավորված են հետևյալ կերպ՝

Թիվ	1	2	3	4	5	6
Հայերեն տարբերակ	.,-?!"@:;/()1	ԱԲԳԴԵ2ABC	ՁԷԸԹԺ3DEF	ԻԼԽԾԿ4GHI	ՀՁՂՃՄ5JKL	ՅՆՇՈՉ6MNO
Ռուսերեն տարբերակ	.,-?!"@:;/()1	АБВГ2ABC	ДЕЖЗ3DEF	ИЙКЛ4GHI	МНОП5JKL	РСТУ6MNO
Անգլերեն տարբերակ	.,-?!"@:;/()1	2ABC	3DEF	4GHI	5JKL	6MNO
Թիվ	7	8	9	0	Text	REC
Հայերեն տարբերակ	ՊՋՌՍՎ7PQRS	ՏՐՑՈՒՓ8TUV	ՔևՕՖ9WXYZ	Միջակայք 0	*+	միջակայք
Ռուսերեն տարբերակ	ФХЦЧ7PQRS	ШЩЪЫ8TUV	ЬЭЮЯ9WXYZ	Միջակայք 0	*+	միջակայք
Անգլերեն տարբերակ	7PQRS	8TUV	9WXYZ	Միջակայք 0	*+	միջակայք



- **Օգտվողի պատկեր -** ներկայացնում է այն պատկերը, որը օգտվողը տեսնում է իր բաժանորդային անվան վերևում՝ U!TV պորտալ մուտք գործելիս:
Ընտրելու համար Ձեր նախընտրած «Օգտվողի պատկերը» անցեք «Օգտվողի պատկերը» դաշտ և սեղմեք OK: Կհայտնվի պատուհան՝ պատկերի մի շարք տարբերակներով՝ տուն, տղամարդ, կին, տղա, աղջիկ, պապիկ, տատիկ: Անցեք օգտվողի նախընտրած պատկերին և հաստատեք ընտրությունը՝ սեղմելով OK, կամ «ելք» դուրս գալու համար:



- **PIN -** Գաղտնաբառ
U!TV պորտալի յուրաքանչյուր օգտվող կարող է ունենալ իր հաշիվը՝ իր մուտքանունով, ինչպես նաև կարող է սահմանել գաղտնաբառ PIN՝ իր հաշիվ մուտք գործելու համար: PIN կոդը սահմանելու համար անցեք PIN դաշտը և սեղմեք OK. Կհայտնվի փոքր պատուհան.
Մուտքագրեք Ձեր ցանկացած PIN-ը՝ օգտագործելով վահանակի թվատախտակը(14) կամ ջնջեք տեքստը՝ սեղմելով կոճակը վահանակի վրա:
Մուտքագրելուց հետո սեղմեք OK, հաստատեք PIN-ը՝ կրկին մուտքագրելով այն և սեղմեք OK: Այս գործողությունը հաջողությամբ կատարելուց հետո, U!TV պորտալ մուտք գործելու համար դուք պետք է մուտքագրեք Ձեր PIN-ը, այլապես համակարգը չի հաստատի Ձեր մուտքը:
Դուք կարող եք փոփոխել PIN-ը ցանկացած ժամանակ՝ կատարելով վերոնշյալ գործողությունները: PIN-ից հրաժարվելու համար փոփոխեք PIN-ը և նոր PIN-ը մուտքագրելու դաշտը թողեք դատարկ:

- **Վարկանիշ -** օգտվողի վարկանիշ
Օգտվողի վարկանիշը թույլ է տալիս վերահսկելու U!TV պորտալի օգտվողներին հասանելի բովանդակությունը:

- **Լեզու -** U!TV պորտալի լեզուն ընտրելու հնարավորություն
U!TV Պորտալը հասանելի է երեք լեզուներով:
U!TV պորտալի նախընտրած լեզուն ընտրելու համար անցեք դեպի «լեզու» դաշտը և սեղմեք OK:
Կհայտնվի փոքրիկ պատուհան: Ընտրեք հայերեն, ռուսերեն կամ անգլերեն տարբերակը և սեղմեք OK կամ սեղմեք «ելք» վերադառնալու համար բաժանորդների կարգավորումների էջ:

- **Ֆիլմի սպառման հաղորդագրություն -** Այս գործառույթը նախազգուշացնում է Ձեզ նախօրոք վարձակալված ֆիլմի ժամկետի ավարտի մասին, եթե ֆիլմի վարձակալության ժամկետը սպառվում է ավելի շուտ, քան կավարտվի ֆիլմի դիտումը (հաշվվում է՝ համաձայն ֆիլմի տևողության):

- **Ավտոմատ տիտրեր -** Թույլ է տալիս դիտել ֆիլմի տիտրերը ավտոմատ կերպով, եթե դրանք հասանելի են:

- **Ավտոմատ լեզուներ -** Թույլ է տալիս դիտել ալիքը նախընտրելի լեզվով՝ կախված պորտալի լեզվից:
Երբ ավտոմատ լեզուները անջատված են, և U!TV պորտալի լեզուն ընտրված է ռուսերեն, ապա այն ալիքներում, որոնք ունեն երկու ձայնային տարբերակ, առաջնային կդառնա ռուսերեն տարբերակը:
Ակտիվացնելու համար անցեք «Ավտոմատ լեզուներ» դաշտը և սեղմեք OK, ցանկից ընտրեք «Միացնել» և սեղմեք OK. Երբ ավտոմատ լեզուները միացված են, և U!TV պորտալի լեզուն ընտրված է հայերեն կամ անգլերեն, ապա այն ալիքներում, որոնք ունեն երկու ձայնային տարբերակ, առաջնային կդառնա

բնօրինակ տարբերակը: Երբ ավտոմատ լեզուները միացված են, և U!TV պորտալի լեզուն ընտրված է ռուսերեն, ապա այն ալիքներում, որոնք ունեն երկու ձայնային տարբերակ, առաջնային կդառնա ռուսերեն տարբերակը:

- **X ալիքների ծածկագիր -** ծածկագիր մեծահասակների համար նախատեսված ալիքներ դիտելու համար:

- **Հիմնական մենյու -** Այստեղ Դուք կարող եք ընտրել պորտալի հիմնական էջի պատկերման տեսքը:

Կառավարել օգտվողներին

Այս հնարավորությունները հասանելի են միայն U!TV պորտալի Ադմինիստրատոր հանդիսացող օգտվողների համար:



Ինչպես կառավարել նոր օգտվողի կարգավորումները

- **Հաղորդումների ցանկի տեսք -** Սահմանեք, թե ինչ ձևով պետք է պատկերվի նոր օգտվողի «Հաղորդումների էլեկտրոնային ցանկը»:

- **Գունավորում -** Ցույց է տալիս U!TV պորտալի օգտագործվող գունավորումը

- **Ադմինիստրատոր -** Ցույց է տալիս՝ տվյալ բաժանորդը հանդիսանո՞ւմ է Ադմինիստրատոր թե՞ ոչ:
  Ադմինիստրատորը կարող է յուրաքանչյուր օգտվողի տալ սահմանափակ հնարավորություններ կամ օժտել ադմինիստրատորի առավելություններով:



Օգտվողի ադմինիստրատոր կարգավիճակը փոփոխելու համար անցեք Ադմինիստրատոր դաշտ և սեղմեք OK: Կբացվի փոքրիկ պատուհան: Այստեղ անցեք դեպի «Այո»/«Ոչ» դաշտը և հաստատեք Ձեր ընտրությունը՝ սեղմելով OK, կամ «ելք» դուրս գալու համար:

Եթե դուք ադմինիստրատոր եք, խորհուրդ է տրվում չփոխել Ձեր կարգավիճակը հասարակ օգտագործողի, քանի որ համակարգը փոփոխությունը պահպանում է անմիջապես և Դուք այլևս չեք կարողանա կառավարել Ձեր կարգավիճակը, և կդառնաք հասարակ օգտագործող: Կրկին ադմինիստրատոր դառնալու համար պետք է խնդրեք Ձեր U!TV պորտալի մեկ այլ ադմինիստրատորի դարձնել Ձեզ ադմինիստրատոր, (տե՛ս «Ինչպես կառավարել այլ օգտվողների»):

Եթե դուք ցանկանում եք դադարեցնել Ձեր կարգավիճակը որպես ադմինիստրատոր, Ձեր հաշվում անցեք Ադմինիստրատոր դաշտին և սեղմեք OK: Կբացվի փոքրիկ պատուհան: Այստեղ անցեք դեպի «Ոչ» դաշտը և հաստատեք Ձեր ընտրությունը՝ սեղմելով OK, կամ «ելք» դուրս գալու համար:

- **Օգտվողի անվանում -** Այստեղ Դուք կարող եք գրել նոր բաժանորդի անվանում, որը ցանկանում եք տեսնել U!TV պորտալ մուտք գործելիս:

- **Անուն -** Կարող եք մուտքագրել օգտվողի անունը

- **Ազգանուն -** Կարող եք մուտքագրել օգտվողի ազգանունը

  Օգտվողի անվանումը, անունը կամ ազգանունը փոփոխելու համար անցեք համապատասխան դաշտ, սեղմեք OK: Կբացվի փոքրիկ պատուհան:

Տպեք Ձեր ցանկացած անվանումը՝ օգտագործելով Ձեր թվատախտակը(14) հեռակառավարման վահանակի վրա:

- **Օգտվողի պատկեր -** այն պատկերն է, որը օգտվողը տեսնում է իր բաժանորդային անվան վերևում՝, U!TV պորտալ մուտք գործելիս: Ընտրելու համար Ձեր նախընտրած «Օգտվողի պատկերը» անցեք «Օգտվողի պատկերը» դաշտ և սեղմեք OK. Կհայտնվի պատուհան՝ պատկերի մի շարք տարբերակներով՝ տնակ, տղամարդ, կին, տղա, աղջիկ, պապիկ, տատիկ: Անցեք նախընտրած «օգտվողի պատկերին» և հաստատեք ընտրությունը՝ սեղմելով OK, կամ «Ելք» դուրս գալու համար:

Այս դաշտերը փոփոխելը չի առաջացնում որևէ փոփոխություն կամ պատասխանատվություն Ձեր պայմանագրային հիմունքներում:

- **PIN -** PIN կոդը սահմանելու համար անցեք PIN դաշտը և սեղմեք OK. Կհայտնվի փոքր պատուհան: Մուտքագրեք Ձեր ցանկացած PIN-ը նոր օգտվողի համար՝ օգտագործելով վահանակի թվատախտակը(14) կամ ջնջեք տեքստը՝ սեղմելով » վահանակի վրա: Մուտքագրելուց հետո սեղմեք OK, հաստատեք PIN-ը՝ կրկին մուտքագրելով այն և սեղմեք OK. Այս գործողությունը կատարելուց հետո նոր օգտվողը U!TV պորտալի իր հաշիվ մուտք գործելիս պետք է հավաքի Ձեր սահմանած PIN-ը: Եթե օգտվողը ադմինիստրատոր չէ, ապա հետագայում չի կարող ինքնուրույն փոփոխել իր PIN-ը:

- **Լեզու -** Այստեղ դուք կարող եք սահմանել, թե ինչ լեզվով պետք է լինի տվյալ օգտվողի U!TV պորտալը:

- **Վարկանիշ -** վարկանիշը սահմանելով, Դուք սահմանում եք, թե ինչ ֆիլմեր կարող է դիտել տվյալ օգտվողը «Տեսավարձույթ բաժնում»: U!TV պորտալում հիմնականում օգտագործված է ֆիլմերի վարկանշային միջազգային արժեհամակարգը:

U!TV պորտալում առկա են վարկանիշային հետևյալ արժեքները՝

- **NR - Not rated -** Վարկանիշը նշված չէ

- **G - General audiences -** Ֆիլմը ցուցադրվում է առանց սահմանափակման

- **PG - Parental guidance suggested -** Երեխաներին առաջարկվում է դիտել ֆիլմը ծնողների հետ միասին

- **PG-13 - Parents strongly cautioned -** 13 տարեկանից ցածր երեխաները կարող են դիտել ֆիլմը միայն ծնողների հետ միասին

- **NC-17 - Adults only. No one under 17 admitted -** Ֆիլմ մեծահասակների համար. Մինչև 17 տարեկան անձանց արգելվում է դիտել ֆիլմը

- **R - Restricted -** 17 տարեկանից ցածր երեխաներին թույլատրվում է դիտել ֆիլմը՝ միայն ծնողների կամ օրինական հոգաբարձուի հետ

- **X - Erotic content. Adults only. No one under 17 admitted** Ֆիլմը պարունակում է էրոտիկ բովանդակություն. մինչև 17 տարեկան անձանց արգելվում է դիտել ֆիլմը:



Ֆիլմերի վարկանիշերի համար մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ http://www.mpaa.org/ վեբ կայքում:

Գրանցել օգտվող

Գրանցել օգտվող

Օգտվող ավելացնելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ, երբ մեկ հեռուստացույցից օգտվում են տարբեր նախասիրություններ ունեցող, տարբեր տարիքային խմբերի պատկանող անձինք:

Ինչպես ավելացնել օգտվող

Բաժանորդի կարգավորումներ էջում անցեք դեպի «Գրանցել օգտվող» դաշտը և սեղմել OK: Կհայտնվի պատուհան, որտեղ պետք է ավելացնել Նոր օգտվողի անունը: Մուտքագրեք անունը և սեղմեք OK: Էկրանին կհայտնվի օգտվողի ավելացումը հաստատող հաղորդագրություն:
Նոր օգտվողի հաշիվը կհայտնվի հաջորդ անգամ U!TV պորտալ մուտք գործելիս:
Նոր օգտվողի կարգավորումները կառավարելու համար պետք է անցնել «Կառավարել օգտվողներին» դաշտ և սեղմել OK:

Ջնջել օգտվող

Ջնջել օգտվող

Եթե ցանկանում եք ջնջել օգտվողներից մեկի հաշիվը, անցեք դեպի Ջնջել բաժանորդ և սեղմեք OK, ապա հայտնված պատուհանում ընտրեք օգտվողի անունը, ում հաշիվը ուզում եք ջնջել և սեղմեք OK: Գործողությունը հաջողությամբ իրականացված է:

5” Փնտրել







Ծանոթացում Փնտրել գործողության հետ

Որոնման շնորհիվ U!TV պորտալից օգտվողը հնարավորություն է ստանում գտնելու իր ցանկացած հեռուստահաղորդումը կամ ֆիլմը՝ տեսավարձույթից:

Ինչպես անցնել «Փնտրել» էջ

«Մենյուի որոնում» բաժին անցնելու համար սեղմեք MENU, անցեք Փնտրել և սեղմեք OK: Կհայտնվի որոնման էջը: Ընտրեք որոնման կատեգորիան՝

Ամենուր
Ըստ վերնագրի
Ըստ դերասանի
Ըստ ռեժիսորի
Ըստ ժանրի
Ըստ նկարագրության

կոճակի օգնությամբ նշեք Ձեզ նախընտրած կատեգորիան և սեղմեք OK:
կոճակի օգնությամբ անցեք «Փնտրել տեքստը» դաշտ և սեղմեք OK: Կհայտնվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է մուտքագրել որոնվող բառը կամ արտահայտությունը և սեղմեք OK:

Անցեք Փնտրել և սեղմեք OK:

Կհայտնվի որոնման արդյունքների ցանկ, որը բաղկացած է 2 սյունակից՝ Վերնագիր /հաղորդման կամ ֆիլմի/ և Տեսակ /հեռարձակում, տեսավարձույթ/ :

Ձեզ հետաքրքրող բովանդակությունը դիտելու համար կոճակների օգնությամբ անցեք վեր/վար և սեղմեք OK: Ըստ բովանդակության տեսակի՝ Դուք մուտք կգործեք տվյալ բովանդակության հնարավորությունների մենյու/պատուհան/:

6” Հաղորդումների էլեկտրոնային ցանկ(EPG)

Ինչ է EPG-ն

Հաղորդումների ցանկը կամ Հաղորդումների էլեկտրոնային ցանկը (EPG) հեռուստապորտալի այն բաժինն է, որտեղ Դուք կարող եք կառավարել Ձեր հաղորդումները:

«Հաղորդումների ցանկ» բաժին մուտք գործելու համար սեղմեք TV կոճակը: Հաղորդումների ցանկը կհայտնվի Ձեր հեռուստաէկրանին:



Հաղորդումների ցանկի պատկերման տարբերակները

Հաղորդումների ցանկը ունի պատկերման երկու ձև՝ Ցանկ և Ժամանակատախտակ: Դուք կարող եք ընտրել Ձեր հիմնական պատկերման ձևը՝ անցնելով Բաժանորդի կարգավորումներ:

Պատկերման ձևը ժամանակավորապես փոփոխելու համար անցեք MENU, սեղմեք OK կոճակը, կբացվի փոքր պատուհան, որտեղից անցեք Ցանկ/Ժամանակատախտակ և սեղմեք OK:

Հաղորդումների ցանկի ձախ կողմում դուք կարող եք տեսնել հեռուստաալիքները: Ալիքի անվանման առջև դուք տեսնում եք ալիքի հերթական համարը ըստ ընտրված դասավորման կարգի:

Ալիքից ալիք անցնելու համար սեղմեք ▲▼ կոճակները: «Ցանկ» պատկերման ձևը ցույց է տալիս ձախ կողմից ընտրված ալիքի համար ընթացիկ օրվա բոլոր հաղորդումները և հեռարձակման ժամերը: Մոխրագույնով պատկերված են անցած հաղորդումները, իսկ սևով ընթացիկ և ապագա հաղորդումները:
Անցած կամ ապագա հաղորդումները տեսնելու համար սեղմեք ▲▼ կոճակները:

«Ժամանակատախտակ»-ի վերևում դասավորված են հեռուստաալիքները, որոնցից ներքև սյունով պատկերված են հեռուստահաղորդումները: Ձախ կողմում դուք կարող եք տեսնել հաղորդումների հեռարձակման ժամերը՝ 30 րոպե տրոհումներով: Ժամերից աջ դուք կարող եք տեսնել այդ ժամին հեռարձակվող հաղորդումները ըստ ալիքի: Հորիզոնական կանաչ սլաքը ցույց է տալիս տվյալ պահին հեռարձակվող հաղորդումները:
Հաջորդ/նախորդ հեռուստաալիք անցնելու համար սեղմեք « » կոճակները:

EPG մենյու

Ընտրեք ալիքը՝ սեղմելով OK՝ EPG-ի հնարավորությունները տեսնելու համար:

Ալիքի հնարավորություններ

- **Փնտրել -** Որոնում կատարելու համար անցեք «Փնտրել» և սեղմեք OK և Դուք կուղղորդվեք «Փնտրել» հիմնական մենյու:
- **Դիտել ալիքը -** ալիքը դիտելու համար անցեք դեպի ալիք, սեղմեք OK, բացված պատուհանում սեղմեք «Դիտել ալիքը» և սեղմեք OK:
- **Նորացնել ցանկը -** Հաղորդումների ցանկի բովանդակությունը թարմացնելու համար անցեք «Թարմացնել» և սեղմեք OK:
- **Ելք -** Դադարեցնել գործողությունը

Հաղորդումների հնարավորություններ

- **Դիտել ալիքը**
- **Վերսկսել հաղորդումը -** Տե՛ս Հատուկ հնարավորություններ/Վերսկսել
- **Ձայնագրել հաղորդումը -** Տե՛ս Հատուկ հնարավորություններ/Ձայնագրել
- **Նկարագրություն -** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար անցեք Նկարագրություն և սեղմեք OK:
- **Նորացնել ցանկը -** Տե՛ս Ալիքի հնարավորություններ
- **Ելք -** Դադարեցնել գործողությունը



7” Վիդեո

Տեսավարձույթ

Ucom-ի օնլայն տեսավարձույթը ֆիլմերի մեծ տեսադարան է հենց Ձեր տանը: Այստեղ Դուք կարող եք գտնել տարբեր ժանրերի HD որակի ֆիլմեր, 3D ֆիլմեր, հայկական բովանդակություն:

Անցում օնլայն տեսավարձույթ բաժին

Օնլայն տեսավարձույթի մենյուին անցնելու համար սեղմեք MENU հեռակառավարման վահանակի վրա, անցեք Վիդեո - Տեսավարձույթ՝ սեղմելով OK.

Ծանոթություն Տեսավարձույթի մենյուի և ֆիլմերի բաժինների հետ:

Ֆիլմերի բաժինները

Տեսավարձույթում ֆիլմերը դասակարգված են ըստ ժանրերի: Ժանրերը դասավորված են վերևում, իսկ յուրաքանչյուր ժանրի համապատասխան ֆիլմերը՝ ներքևում: Նախընտրած ժանրին անցնելու համար օգտագործեք « » կոճակները և սեղմեք OK: Ֆիլմն ընտրելու համար օգտագործեք « » ^ v կոճակները:

- **Իմ ֆիլմերը -** Այս բաժնում Դուք կարող եք տեսնել վերջին 24 ժամվա ընթացքում Ձեր վարձակալած ֆիլմերը: Երբ Դուք վարձակալում եք որևէ ֆիլմ, Ձեր վարձակալած յուրաքանչյուր ֆիլմ հայտնվում է այս բաժնում:
- **! New Films -** Այս բաժնում Դուք կարող եք գտնել այն ֆիլմերը, որոնցով համալրվել է մեր տեսադարանը



- վերջին ամսվա ընթացքում /նոր և հին ֆիլմեր/:
- **! New Release -** Այս բաժնում Դուք կարող եք գտնել ամենաթարմ ֆիլմերը, որոնք նոր են մուտք գործել համաշխարհային վարձույթ:
- **! Best Sellers -** Այս բաժնում Դուք կարող եք գտնել մեր բաժանորդների կողմից ամենաշատ դիտված ֆիլմերը:

Ֆիլմերի մասին տեղեկություն և վարձակալություն

Անցեք ստորև ներկայացված ֆիլմերից որևէ մեկին՝ հեռակառավարման վահանակի ^ v « » կոճակներով: Յուրաքանչյուր բաժնի ֆիլմերը դասավորված են այբբենական կարգով: Ֆիլմի պոստերներից ներքև տակ Դուք տեսնում եք տեղեկություն նշված ֆիլմի մասին.

- **Ֆիլմի անվանումը** (անգլերեն և/կամ ռուսերեն և/կամ բնօրինակի լեզվով)
- **Թողարկման տարեթիվը**
- **Վարձակալության գինը**՝ ՀՀ դրամով
- **Ֆիլմի տևողությունը**
- **Ֆիլմի վարկանիշը**
- **Ֆիլմի հասանելի լեզուները/ աուդիո հնարավորությունը**

Ֆիլմի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար սեղմեք INFO կոճակը կամ սեղմեք OK, անցեք «Մանրամասն» և սեղմեք OK:

Դուք կանցնեք ֆիլմի մասին տեղեկությունների էջ, որտեղ կգտնեք.

- **Ֆիլմի անվանումը**
- **Թողարկման տարեթիվը**
- **Վարձակալության գինը՝** ՀՀ դրամով
- **Ֆիլմի տևողությունը**
- **Ֆիլմի վարկանիշը**
- **Վարձակալության ժամկետը**
- **Ֆիլմի ժանրը/ժանրերը/**
- **Ռեժիսորի անունը**
- **Դերասանների անունները**
- **Դերասանների անունները**
- **Ֆիլմի կարճ նկարագիրը**
- **Ֆիլմի հասանելի լեզուները/ աուդիո հնարավորությունը**

Այս էջից Դուք կարող եք միանգամից վարձակալել ֆիլմը, դիտել ֆիլմի անվճար հոլովակը կամ դիտել արդեն վարձակալված ֆիլմը:

Սեղմեք OK կոճակը, անցեք վարձակալել/դիտել ֆիլմը տողի վրա և սեղմեք OK՝ ֆիլմը վարձակալելու/ դիտելու համար:

Սեղմեք OK կոճակը, անցեք «Դիտել հոլովակը» տողի վրա և սեղմեք OK՝ ֆիլմի հոլովակը դիտելու համար:
Սեղմեք BACK կոճակը՝ VoD գլխավոր մենյու վերադառնալու համար:

Ֆիլմի հոլովակի դիտում

Ֆիլմի հոլովակը դիտելու համար անցեք ֆիլմի պոստերի վրա, սեղմեք OK, անցեք դեպի դիտել հոլովակը և սեղմեք OK: Կսկսվի ֆիլմի հոլովակը:

Հոլովակի ընթացքում սեղմեք OK՝ հոլովակի ժամանակացույցը, ֆիլմի անվանումը, կառավարման կոճակները ⏪ ⏩ ⏯ ⏹, հոլովակի տևողությունը տեսնելու համար:

Հոլովակի ժամանակավոր դադարի և դիտումը շարունակելու համար օգտագործեք ⏯ կոճակը՝ վահանակի վրա: Հոլովակը արագ հետ/առաջ տալու համար բազմակի սեղմեք ⏪ ⏩ կոճակը մինչև հասնեք առավելագույն արագության:

Հոլովակը դադարեցնելու համար սեղմեք BACK, ⏹ կամ սեղմեք OK - Դադարեցնել դիտումը - OK.
Այժմ Դուք վերադարձաք VoD գլխավոր մենյու:

Ֆիլմի վարձակալում

VoD մենյուից ֆիլմ վարձակալելու համար անցեք ֆիլմ, սեղմեք OK, բացված պատուհանում անցեք ֆիլմի վարձույթ և սեղմեք OK: Կհայտնվի հաստատման պատուհան: Վարձակալությունը հաստատելու համար ընտրեք ընդունել և սեղմեք OK կամ ընտրեք «Ելք»՝ վարձակալությունը մերժելու համար:



Ֆիլմը անմիջապես կհայտնվի «Իմ ֆիլմերը» բաժնում:

Այժմ Դուք կարող եք դիտել ֆիլմը՝ 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակությամբ:

Ֆիլմի վարձակալությունը հաստատելուց հետո կհայտնվի

պատուհան, որտեղից անցնելով «Դիտել ֆիլմը» և OK սեղմելով BACK՝ Դուք կարող եք անմիջապես դիտել ֆիլմը: Ֆիլմը ավելի ուշ դիտելու համար անցեք «Ելք» և սեղմեք կամ սեղմեք OK:

Առաջիկա 24 ժամվա ընթացքում Դուք կարող եք դիտել ֆիլմը Ձեր «Իմ ֆիլմերը» բաժնից:

Ֆիլմի դիտում

Ֆիլմը դիտելու համար ֆիլմի վրա սեղմեք OK ընտրեք «Դիտել ֆիլմը» և սեղմեք OK.



Ֆիլմի ընթացքում սեղմեք OK՝ ֆիլմի ժամանակացույցը, ֆիլմի անվանումը, կառավարման կոճակները, ֆիլմի տևողությունը տեսնելու համար:
Ֆիլմը կառավարելու համար օգտագործեք կոճակները:

Հոլովակի ժամանակավոր դադարի և դիտումը շարունակելու համար օգտագործեք կոճակը վահանակի վրա: Հոլովակը արագ ետ/առաջ տալու համար բազմակի սեղմեք կոճակները մինչև հասնեք առավելագույն արագության:

Եթե ցանկանում եք դիտել ֆիլմը այլ լեզվով, ստուգեք ֆիլմը այդ լեզվով դիտելու հնարավորությունը: Սեղմեք OK երկու անգամ, անցեք «Ընտրել լեզուն»: Եթե հասանելի է, անցեք նախընտրած լեզվի դաշտ և սեղմեք OK:
Ֆիլմը դադարեցնելու համար սեղմեք BACK կամ .

Դուք կարող եք ցանկացած պահի ժամանակավորապես դադարեցնել ֆիլմի դիտումը և վարձակալությունից հետո 24 ժամվա ընթացքում վերադառնալ և դիտել այն:



Ֆիլմը ևս մեկ անգամ դիտելու համար, Դիտել ֆիլմը հրահանգից հետո կհայտնվի պատուհան, որը Ձեզ կառաջարկի վերադառնալ ֆիլմ և շարունակել դիտումը կամ վերսկսել ֆիլմը սկզբից: Նշեք նախընտրելի տարբերակը և սեղմեք OK:



8” Իմ նյութերը

«Իմ նյութերը» բաժնում, որտեղ Դուք կարող եք կառավարել Ձեր ձայնագրությունները, հիշեցումները, դիտել վճարումները, վարձակալած ֆիլմերը:

Անցում «Իմ նյութերը» բաժին

«Իմ Նյութերը» բաժին անցնելու համար սեղմեք MENU, անցեք «Իմ Նյութերը» բաժին, կբացվի ենթամենյու, որտեղից անցեք Ձեր նախընտրած ենթաբաժին և սեղմեք OK՝ Ձեր նյութերը տեսնելու համար:



Ձայնագրություններ

«Իմ Նյութերը» բաժնի ենթամենյուից անցեք «Ձայնագրություններ» և սեղմեք OK:

Ձայնագրությունների կառավարման էջը բաղկացած է 4 սյունակից:

- **Հաղորդման անվանումը**
- **Ալիքի անվանումը**
- **Հաղորդման տևողությունը**
- **Հաղորդման մեկնարկի ժամը՝ ըստ EPG**
- **Ձայնագրման կատարման կարգավիճակը**

Դուք կարող եք տեսնել 3 կարգավիճակի հաղորդագրություն՝ նախատեսված, ընթացիկ, ավարտված:
Ձայնագրություն պլանավորելու մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Հատուկ հնարավորություններ բաժինը - Ձայնագրում:

«Ձայնագրություններ» ենթամենյուի ներքևի ձախ անկյունում Դուք կարող եք տեսնել ձայնագրության համար օգտագործված տարածքը :
Յուրաքանչյուր բաժանորդի համար նախատեսված է 2 ժամ ձայնագրության տարածք:



Հիշեցումներ

«Իմ Նյութերը» բաժնի ենթամենյուից անցեք «Հիշեցումներ» և սեղմեք OK:

Այստեղ Դուք կարող եք տեսնել Ձեր Պլանավորած ձայնագրությունները և դրանք կառավարել:
Ձայնագրություն կառավարելու մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Հատուկ հնարավորություններ - Ձայնագրում:



Վճարումներ

«Իմ Նյութերը» բաժնի ենթամենյուից անցեք «Վճարումներ» և սեղմեք OK:

«Վճարումներ» էջը բաղկացած է 4 սյունակից:

- **Անվանում -** Ցույց է տալիս գնված բովանդակության անվանումը
- **Ամսաթիվ -** Ցույց է տալիս գնման ամսաթիվը
- **Գին -** Ցույց է տալիս գնված բովանդակության գինը
- **Տեսակ -** Ցույց է տալիս գնված բովանդակության տեսակը

Այս բաժնում երևում են Ձեր կողմից վարձակալած ֆիլմերը, այլ հավելյալ վճարովի ծայառությունները:



9” ելք

«Ելք»-ի միջոցով բաժանորդը կարող է դուրս գալ իր հաշվից:

10" Հատուկ հնարավորություններ

Մինի EPG

Ծանոթացում մինի EPG-ին

Մինի EPG-ն IP հեռուստատեսության բոլոր հիմնական առավելությունները պարունակող պարզ գործիք է: Այս գործիքի շնորհիվ Դուք կարող եք կառավարել Ձեր եթերը. դիտել ավարտված հաղորդումներ, պլանավորել ձայնագրություններ և այլն:

Մինի EPG մուտք գործելու համար սեղմեք OK եթերի ժամանակ: Կհայտնվի Մինի EPG պատուհանը:
Մինի EPG-ից Դուք կարող եք գտնել ընթացիկ հաղորդման անվանումը, սկիզբը և ավարտը, շաբաթվա օրը, ընթացիկ ժամը, ալիքի հերթական համարը և անվանումը:
Այստեղից դուք կարող եք նաև ծանոթանալ Ձեր ձայնագրության կարգավիճակին: Ձայնագրությունների համար տես ստորև:

Սեղմեք OK՝ ևս մեկ անգամ EPG հնարավորություններ մուտք գործելու համար:

Այստեղ Դուք կարող եք տեսնել

- **Ընտրել լեզուն**
- **Փնտրել**
- **Վերսկսել հաղորդումը**
- **Ձայնագրել հաղորդումը**
- **Նկարագրություն**



- **Դադար**
- **Ելք**

Ընտրել լեզուն - Եթե ցանկանում եք դիտել հաղորդումը/ալիքը այլ լեզվով, ստուգեք հեռուստաալիքը այլ լեզվով դիտելու հնարավորությունը: Սեղմեք OK երկու անգամ, անցեք ընտրել լեզուն: Եթե հասանելի է, անցեք նախընտրած լեզվի դաշտ և սեղմեք OK:

Նկարագրություն - Լրացուցիչ տեղեկություններ հեռարձակվող հաղորդման մասին ստանալու համար անցեք Նկարագրություն և սեղմեք OK:

Դադար, հետ գնալ, առաջ գնալ, նվագարկել

Հաղորդման ընթացքում սեղմեք II կոճակը, և Ձեր օգնայն հեռարձակումը կդադարի: Դադարեցված հաղորդումը կրկին դիտելու համար սեղմեք II կոճակը: Հաղորդումը հետ կամ առաջ տալու համար սեղմեք RW « կամ » FW:

- Դուք կարող եք հետ տալ հաղորդումը, քանի դեռ այն չի հասել սկզբին
- Դուք կարող եք առաջ տալ հաղորդումը, քանի դեռ այն չի հասել վերջին կամ ուղիղ եթերին:

Դուք կարող եք ժամանակավորապես դադարեցնել հաղորդումը և նույն պահից այն վերսկսել (հաղորդման ցուցադրման ժամից 24 ժամվա ընթացքում): Դուրս գալու համար սեղմեք MCR երկու անգամ կամ սեղմեք ■.



Տեսացանկի նկար

Այս գործողության շնորհիվ Դուք կարող եք առանց ալիքը թերթելու, տեսնել՝ թե ինչ հաղորդում է հեռարձակվում այլ ալիքներով:

Եթերի ժամանակ սեղմեք OK, կբացվի մինի EPG-ին, ապա ցանկի թերթման կոճակներով ● ● անցեք դեպի հաջորդ/նախորդ ալիքը. ընթացիկ հաղորդման եթերը կարտացոլվի մինի EPG-ի ձախ կողմում:

Մինի EPG-ից օգտագործելով « » կոճակները՝ կարելի է տեսնել տեղեկություն հեռարձակվող հաղորդմանը հաջորդող/նախորդող հաղորդումների մասին:

Ձայնագրում

U!TV պորտալը հնարավորություն է տալիս կատարել ընթացիկ կամ հաջորդ 24 ժամվա ընթացքում հեռարձակվող հաղորդումների ձայնագրուում և դիտել այն 10 օրվա ընթացքում:
Գոյություն ունի ձայնագրման 3 եղանակ.

Մինի EPG-ից
EPG-ից
Հաղորդումը դիտելիս՝ սեղմելով հեռակառավարման վահանակի ● կոճակը

Հաղորդումը ձայնագրելու համար մուտք գործեք EPG կամ մինի EPG, ընտրեք հաղորդումը, սեղմեք OK, բացված ցանկից ընտրեք «Ձայնագրել» և սեղմեք OK կամ հաղորդումն ընտրելուց հետո սեղմեք հեռակառավարման վահանակի ● կոճակը:

Ձեր ձայնագրություններին հետևելու համար մուտք

գործեք MENU - Իմ նյութեր - Ձայնագրություններ: Այստեղ Դուք կարող եք կառավարել Ձեր ձայնագրությունները՝ դադարեցնել ընթացող ձայնագրությունը, ջնջել հին ձայնագրությունները: Դուք ունեք ձայնագրության համար հատկացված 2 ժամ ազատ տարածություն:

Catch up/ավարտված հաղորդումների դիտում/

Catch-up ֆունկցիան Ձեզ թույլ է տալիս վերադառնալ և դիտել այն ֆիլմը կամ ծրագիրը, որը Դուք բաց եք թողել վերջին 24 ժամվա ընթացքում:

Catch-up ֆունկցիան կարող եք կիրառել EPG կամ մինի EPG-ից. EPG կամ մինի EPG օգնությամբ գտեք Ձեր նախընտրած հաղորդումը, սեղմեք OK և բացված ցանկից ընտրեք catch-up հաղորդում և սեղմեք OK:

Վերսկսել հաղորդումը

Եթե Դուք ուշացել եք որևէ հաղորդման կամ ֆիլմի սկզբից, Դուք կարող եք վերսկսել հաղորդումը և դիտել այն սկզբից:

Հաղորդումը վերսկսելու համար մուտք գործեք EPG կամ մինի EPG, ընտրեք հաղորդումը, սեղմեք OK, բացված ցանկից ընտրեք «Վերսկսել հաղորդումը» և սեղմեք OK: Հաղորդումը կսկսվի՝ համաձայն EPG-ում նշված ժամի:

Դուրս գալու համար սեղմեք BACK երկու անգամ կամ սեղմեք ■ կոճակը:

Ալիքների դասավորում

Անցեք Մենյու, Կարգավորումներ, իջեք «Ալիքների կառավարում» դաշտ և սեղմեք OK.
Կբացվի պատուհան, որտեղ Դուք կարող եք ստեղծել և կառավարել «Ալիքների ցանկ»-եր:

Նոր ցուցակ ավելացնելու համար անցեք համապատասխան դաշտ և սեղմեք OK:

Կբացվի պատուհան, որի ձախ սյունակում դասավորված են կառավարման դաշտերը: Ալիքների ցանկը երևում է երկու սյունակով՝ ներառված(մեջտեղի սյունակ) և բացառված(աջ սյունակ) ալիքներ:

Կառավարման դաշտերն են՝

- **Ցանկի հասանելիությունը**
- **Վերանվանել ցանկը**
- **Հեռացնել ցանկը**
- **Ներառել բոլոր ալիքները**
- **Բացառել բոլոր ալիքները**
- **Բացառել անհասանելի ալիքները**
- **Բացառել չբաժանորդագրվածները**
- **Ալիքների սկզբնական դիրքեր**
- **Օգտագործել տվյալ ցուցակը**

Դուք կտեսնեք բոլոր ալիքները «ներառված» դաշտում(մեջտեղի սյունակ): Եթե ցանկանում եք մի

ալիք բացառել Ձեր ցուցակից, նշեք ալիքը՝ սեղմելով OK, ապա անցեք բացառված այուսակ(աջ) և սեղմեք OK: Այժմ ալիքը Ձեր ցուցակից հանված է: Այլ ալիքներ բացառելու համար կրկնեք այս գործողությունը: Հնարավոր է նաև փոխել ալիքների հերթականությունը և հերթական համարը: Ալիքը ցուցակում վեր/վար տեղափոխելու համար սեղմեք OK, ապա ⌃⌄ կոճակներով տեղափոխեք և սեղմեք OK: Հերթական համարը փոխելու համար ալիքի վրա սեղմեք OK, ապա մուտքագրեք համարը թվատախտակի(14) միջոցով և սեղմեք OK:

Մեծ քանակի ալիքներ միանգամից ներառելու/բացառելու համար օգտագործեք «Ներառել բոլոր ալիքները, Բացառել բոլոր ալիքները, Բացառել անհասանելի ալիքները, Բացառել չբաժանորդագրվածները» հրամանները, իսկ դասավորվածության հիմնական ձևը վերականգնելու համար օգտագործեք «Ալիքների սկզբնական դիրքեր» հրահանգը:

Ստեղծված ցուցակի անվանումը փոխելու համար անցեք «Վերանվանել ցանկը» և սեղմեք OK: Բացված պատուհանում մուտքագրեք նախընտրած անունը և հաստատեք՝ սեղմելով OK:

Ստեղծված ցուցակը օգտագործելու համար անցեք «Օգտագործել տվյալ ցուցակը» դաշտ և սեղմեք OK:

Ստեղծված ցուցակը կարելի է կիսել մյուս օգտագործողների հետ, որի համար անցեք «Ցանկի հասանելիություն» և սեղմեք OK: Կբացվի պատուհան, որտեղից ընտրեք նախընտրելի տարբերակը և սեղմեք OK: Որևէ ցուցակ ջնջելու համար անցեք «Հեռացնել ցանկը» դաշտ և սեղմեք OK:

Այս մենյուից դուրս գալու ժամանակ կհայտնվի պատուհան, որտեղ Դուք կարող եք պահպանել կամ մերժել փոփոխությունները:

© Copyright "Ucom" LLC ® All Rights Reserved 2015

Universal Communications

www.ucom.am